Բոլոր թվում անձինք մտցվում են տնտեսություն չնչեքի կազմի մեջ:

57. Այն տնտեսություններում, վորոնց կազմի մեջ կան զինվորականներ, կամ պահեստի զինապարտներ, վորոնք կանչված են նրանց համար սահմանված ուսուցման և հավաքների, հարկի այն մասը, վորի վճարման ժամկետը լրանում է ուսուցման և հավաքի ժամանակահատվածում, հետաձգվում է այդ անձանց վերադառնալուց հետո մեկ ամիս ժամանակով:

Այդ ժամանակի համար տույժ չի դանձվում:

ԱԺՈՒՍԱՏՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

58. Հարկից ազատվում են այն անձանց տնտեսությունները, վորոնք պայմանագրեր են կնքել աճխային արգյունարերություն ստորերկրյա աշխատանքներ կատարելու կամ ինքնաարացվել են այդ արգյունարերությունը մեկ տարուց վոչ պակաս ժամանակով:

ՏԵՂԱՓՈՍՎՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

59. Տեղափոխության կանոնների կարգով մինչև 1930 թ. ապրիլի 1-ը նոր վայրեր տեղափոխված անհատական տնտեսություններին արվում են հետևյալ արտոնությունները՝

ա) այն տնտեսությունները, վորոնք տեղափոխվել են այնպիսի վայրեր, վորտեղ պահանջվում է կոնդաճատություն և մեխիորատիվ այլ աշխատանքների միջոցով մշակելի հողեր պատրաստել, ազատվում են հարկից տեղափոխվելուց հետո հինգ տարի շարունակ:

բ) այն տնտեսությունները, վորոնք տեղափոխվել են այնպիսի վայրեր, վորտեղ պահանջվում է խամ հողեր մշակել, ազատվում են հարկից տեղափոխվելուց հետո 3 տարի շարունակ:

60. 1930 թ. ապրիլի 1-ից հետո տեղափոխված անհատական տնտեսություններին հարկային արտոնություններ տալու հարցը և արտոնությունների ծավալը վորոշվում է առանձին:

61. Այն դեպքերում, յերբ տեղափոխված տնտեսությունը յենթարկվել է տարերային աղետի, արտոնություններ վայելելու ժամանակահատվածը յերկարացվում է մեկ տարով:

62. Տեղափոխվողների համար սահմանված արտոնությունները տարածվում են նաև՝

ա) այն ներդաղթողների և արտագողթից վերադարձողների վրա, վորոնք սահման աշխատում են գյուղատնտեսություն ասպարիզում:

բ) նստակյաց աշխատանքի անցնող գնչուների վրա, յերբ նրանց հող է հատկացվում գյուղական վայրերում:

ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԺ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

63. Տարերային աղետներից առժամ տնտեսություններին հարկից լիովին կամ մասամբ ազատում են գյուղական հարկային հանձնաժողովները, նախժ տնտեսության կրամ ընդհանուր վնասի չափին և տնտեսության կարողությունը:

ԿՈՒՆԱԿԱՅԻՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԺՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

64. Այն աշխատավորական տնտեսությունները, վորոնց կազմի մեջ կան կուլակություն կամ կատարած յերույթների համար կուլակների կողմից ըստանված անձանց այրիներ ու անչավահատ դավաղներ, ազատվում են միասնական գյուղատնտեսական հարկից այդ անձանց մահից հետո 5 տարվա ընթացքում, յեթե նույնիսկ տնտեսություն մեջ կան ուրիշ աշխատանակ անդամներ:

ԱՅԼ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

65. Պաշտոնական սրարտականությունները կատարման միջոցին կամ կատարման հետեվանքով սպանված անտառային աշխատողների այրիների և անչավահատ դավաղների աշխատավորական տնտեսություններն ազատվում են հարկից այդ աշխատավորների սպանվելուց հետո 5 տարի շարունակ:

66. Իրենց հողատարություն կամ յնամակարություն տակ վորրեր և նրանց գույքերն ընդունած անձանց անտեսությունները հողատարություն և յնամակարություն սահմաններ ուրից յերեք տարի շարունակ ազատվում են յնամարկայների բաժին հողամասերի և նրանց պատկանող անտեսանների յեկամուսների հարկից:

Վորրերը մանում են յնամակարի կամ հողատարի տնտեսության չնչերի թվի մեջ:

Այս արտոնությունները կիրառվում են միայն այն դեպքում, յերբ յնամակարները կամ հողատարները վորրերի հետ միասին են ապրում և միասնակ անտեսություն վարում:

67. Գյուղացիական ծխերի այն լրացուցիչ հողամասերը, վորոնք հատկացվում են գյուղատնտեսական աշխատանքի պատրաստելու նպատակով մանկատներից ընդունված սաների համար, ազատվում են հարկից այդ հողամասերը հատկացնելուց հետո յերեք տարի շարունակ:

Ե. ՀԱՐԿ ՎՃԱՐԵԼՈՒ ԺԱՍԿԵՏՆԵՐԸ

68. Սահմանվում են հարկի վճարման հետեվյալ ժամկետները՝

ա) Կոտայքի, Աշտարակի, Վաղարշապատի և Վեդիքրասարի շրջանների յեռնային մասի, Գյուղքյանդի, Թալինի, Գիլիջանի, Իջևիանի, Սիսիանի, Գորիսի, Ղափանի, Մուլապոկչայի, Մարտունու, Բասարղեչարի, Գարաբաղի, Ստեփանավանի, Ղարաբլիսայի, Ծամբաղի, Նոր Բալաղի, Ախտալի, Ալաշիկերու, Աղբարայի, Արարանի և Մեղրու շրջանների համար՝

1-ին ժամկետը մինչև 1931 թ. սեպտեմբերի 20-ը, պետք է դանձվի հարկի 50 տոկոսը:

2-րդ ժամկետը մինչև 1931 թ. նոյեմբերի 1-ը, պետք է դանձվի հարկի 30 տոկոսը:

3-րդ ժամկետը մինչև 1931 թ. դեկտեմբերի 1-ը, պետք է դանձվի հարկի 20 տոկոսը:

բ) Ղամարլուի, Ղուրդուզուլու շրջանների և Աշտարակի, Կոտայքի, Վաղարշապատի ու Վեդիքրասարի դաշտային մասի համար՝

1-ին ժամկետը մինչև 1931 թ. նոյեմբերի 1-ը, պետք է դանձվի հարկի 50 տոկոսը:

2-րդ ժամկետը մինչև 1931 թ. դեկտեմբերի 1-ը, պետք է դանձվի հարկի 50 տոկոսը:

ԿՈՒԼԱԿՈՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ

69. Բոլոր կուլակային անտեսություններն իրենց իրական յեկամուտների համեմատ հարկվում են անհատական կարգով, այլ փոչ ըստ նորմաների: Երջանային գործկոմները պարտավոր են խիստ հսկողություն սահմանել, փորպեսզի այս հոդվածը կյանքում կիրառելիս, միջակ անտեսությունները անհատական կարգով հարկման չենթարկվեն և այդ կանոնները խախտելու համար մեղավորները չենթարկվեն վարչական կամ դատական խիստ պատասխանատվության:

70. Տնտեսությունները կուլակային են համարվում և անհատական կարգով հարկման են չենթարկվում հետևյալ հատկանիշներն ունենալու դեպքում.

ա) յեթե անտեսությունը սխալմամբ կերպով վարձու աշխատանք է կիրառում դյուղատնտեսական աշխատանքների համար, կամ տնայնագործություն մեջ և ձեռնարկություններում, բացառությամբ այն դեպքերի, յերբ վարձու աշխատանքը կիրառվում է դանազան մշակույթների անսանձհատկություններից և չի դերականցում բանվորական ուժ վարձելու անտվելազույն չափից:

Բանվորական ուժ վարձելու անտվելազույն չափը, փորն անհատական կարգով հարկելու հիմք չի ծառայում, սահմանվում է.

- 1. Հացահատիկային տնտեսությունների համար բոլոր շրջաններում 50 վարձու բանվորական որ.
- 2. Մագրոգործական տնտեսությունների համար բոլոր շրջաններում 100 վարձու բանվորական որ:
- 3. Այգեգործական (պտղատու) տնտեսությունների համար բոլոր շրջաններում 75 վարձու բանվորական որ.
- 4. Բամբակազործական տնտեսությունների համար բոլոր շրջաններում 150 վարձու բանվորական որ.
- 5. Միախոտազործական տնտեսությունների համար բոլոր շրջաններում 200 վարձու բանվորական որ.
- 6. Չայթուկազործական տնտեսությունների համար փոչ-բամբակացան շրջաններում 50 վարձու բանվորական որ:

7. Անասնապահական տնտեսությունները համար մեկ հովիվ կամ հոտաղ.

8. Տնայնագործ - արհեստավորների համար 1 չախահաս բանվոր կամ յերկու աշակերտ, յեթե բանվորի կամ աշակերտի առկայությունը բոլորում և արտադրության անսանձհատկությունից:

Ծանոթություն 1.—Յեթե տնտեսությունն ունի խոն մշակույթի բնույթ, ապա բանվորական ուժ վարձելու անտվելազույն չափը սահմանվում է անտեսության հիմնական դյուղատնտեսության ճյուղի համար նախատեսված բնույթը:

Ծանոթություն 2.—Յեթե անասնապահական տնտեսությունն ունի մեկ մշտական հովիվ կամ հոտաղ և միամամանակ ողտաղործում և սեզոնային 35 բանվորական որ, ապա այդ հանդամները հիմք է ծառայում տնտեսությունը անհատական կարգով հարկելու համար:

Ծանոթություն 3.—Վորերի, այրիների, հողմանդամների և սովորույների տնտեսություններում, փորակը չկան աշխատանակ աղամարդիկ, կամ թե նրանց աշխատանակ աղամարդիկ ծանր հիվանդ են, դանվում են կարմիր Բանակում, հանքազործներ են, կամ բացակայում են անտեսությունից դրսի շինարարական աշխատանքների վրա աշխատելու համար, մեկ մշտական վարձու և սահմանված թվով սեզոնային բանվորների կամ սահմանված սեզոնային որերի թվից փեր, բոլոր փոչ ավելի բուն մեկ մշտական բանվորի վարձու որերը հատկանիշ չեն ծառայում անհատական կարգով հարկելու համար:

բ) յեթե տնտեսությունն ունի ազաց, ձիթհան, դինդ, նորմայով աշխատող ողտու գործարան, կորեկաղաց և դղարան, կարտոֆիլի, պտուղների, բանջարեղենի, բոժոժի կամ ձխախոտի շորանոց կամ այլ արդյունաբերական ձեռնարկություն այն դեպքում, յերբ այդ ձեռնարկություններում գործադրվում են մեքենայական շարժիչ: Յեթե տնտեսությունն մեջ կա այնպիսի ձեռնարկություն, փորն գործադրում է քամու կամ ջրի ուժ այն դեպքում, յերբ այդ ձեռնարկության տարեկան յեկամուտը 125 ա. ավելի յե, իսկ ջր-

բաղաջը յեկամուտը 150 ուրբուց ավելի:

Ծանոթություն 1.—Այն դեպքերում, յերբ քամու կամ ջրի ուժով աշխատող ձեռնարկությունները պատկանում են մի քանի տնտեսությունների, ուրիշ հատկանիշների բացակայության դեպքում, անհատական կարգով հարկվում են այն տնտեսությունները, փորնը իրենց պատկանող ձեռնարկության մասից ստանում են տարեկան 125 ուրբուց ավելի յեկամուտ, իսկ ջրաղացին—150 ա. ավելի:

Ծանոթություն 2.—Այն դեպքերում, յերբ քամու կամ ջրի ուժով աշխատող ձեռնարկությունները պատկանում են մի քանի տնտեսությունների և դրանց շահագործումը կատարվում է ամեն տարի մի տնտեսության կողմից, ըստ հերթի, անհատական կարգով հարկվում են այն տնտեսությունները, փորնը շահագործում են ձեռնարկությունը 1930 թվին կամ այդ տարվա մեծ մասի ընթացքում և ստացել են 125 ա. ավելի յեկամուտ, իսկ ջրաղացից 150 ա. ավելի յեկամուտ:

Ծանոթություն 3.—Նորմայով աշխատող ողտու գործարանները հատկանիշ յեն ծառայում տնտեսությանը անհատական կարգով հարկելու համար, յեթե նրանց տերերը ապրիտ կամ ողի թորելու և վաճառելու նպատակով ծուծ նյութ են դնում, անկախ նրանից, գործադրվում են մեքենայական շարժիչ կամ ջրի ուժ թե փոչ, յեթե տարեկան յեկամուտը 125 ա. ավելի յե:

գ) յեթե տնտեսությունը սխալմամբ անտեսությամբ վարձով է տալիս բարդ դյուղատնտեսական մեքենաները կամ վարձով աշխատեցնում է այդ մեքենաները ուրիշ տնտեսությունների համար:

դ) յեթե տնտեսությունն ունի արդյունաբերական այնպիսի ձեռնարկություն, փորի միջոցով շահագործում է շրջակա բնակչությունը, աշխատանքները հանձնարարելով աներում կատարելու համար, կամ ձեռնարկությունը կապալով տալու միջոցով այն կատարում, յերբ տարեկան յեկամուտը 125 ա. ավելի յե:

ե) յեթե տնտեսությունը, կատարելով իր ցանքի տարածությունը, սխալմամբ անտեսությամբ վարձով է տալիս փոսկան կենդանի քաչող ուսուցիչ տնտեսություններին այն դեպքում, յերբ տարեկան այդ յեկամուտը 125 ա. ավելի յե:

զ) յեթե տնտեսությունը հող է վարձակալում այնպիսի պայմաններով, փորնը շրջանային հարկային հանձնաժողովի կողմից ստրկացուցիչ են ճանաչված վարձով տվողների համար:

ը) յեթե տնտեսությունն անտեսության կամ արդյունաբերական շահագործման նպատակով վարձակալում է պտղատու կամ խաղողի այգիներ, կամ արդյունաբերական ձեռնարկություններ:

Ծանոթություն 1.—Այգիների և հողի վարձակալության, անտեսական կամ արդյունաբերական շահագործման բնույթն ու նպատակը փորնում են շրջանային հարկային հանձնաժողովները:

Ծանոթություն 2.—Վարձակալած այգին չի կարող հատկանիշ լինել տնտեսությունն անհատական կարգով հարկելու համար, յեթե տարածությունը կես դեկտամբրից պակաս է:


թ) յեթե տնտեսությունը վարձով է տալիս սարքավորված առանձին շենքերի բնակություն կամ ձեռնարկության համար այն դեպքում, յերբ այդ շենքերից ստացած տարեկան յեկամուտի գումարը բոլոր վայրերում բացի ամառանոցներից, 200 ուրբուց ավելի յե: Ամառանոցային վայրերում արձատեսությունները համարվում են կուլակային և հարկվում են անհատական կարգով, յեթե ընդհանուր յեկամուտը 500 ա. ավելի յե, իսկ այդ շենքերը վարձով տալուց ստացած յեկամուտը 300 ա. ավելի:

Ծանոթություն 1.—Յեթե տնտեսությունը ամառանոցային վայրերում ամառվա ամիսներին վարձով է տալիս իր բնակարանը՝ ձմեռը նարից այդ շենքում ապրելու համար, անկախ տնտեսության յեկամուտից, անհատական կարգով հարկման յենթակա յե:

Ծանոթություն 2.—Ամառանոցային վայրեր են համարվում Դելիանը, Ստեփանավանը, Ծաղկաձորը, Գորիսը, Նոր-Բայազետը, Յեկեովան, Ախտան և Ալեքուշակը:

Ծանոթություն 3.—Չի թույլատրվում անտեսության կարգով հարկել այն բանվորներին, որոնք սխալմամբ են կամ վարձու ծառայության մասին և փորնը միամամանակ ունեն փոր դյուղատնտեսություն, փորսես յեկամուտի սխալմամբ աղբյուր, նաև սեփական յենտեսության շահագործում են վարձու:

6648656-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՒԼԱԿՈՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ

Այդ բանփորձներն ու ծառայողները հարկվում են ընդհանուր կարգով, վորպես աշխատավորական դուրսացիական տնտեսություններ:

Ի) յեթե տնտեսությունն անդամները պարագլուխ են առեվտրով, վաշխառութեամբ, կամ ունեն այլ վոչ-աշխատավորական յեկամուտներ, նույն թվում նաև կրօնական պաշտամունքի ծառայողները՝ անկախ այդ աղբյուրներից ստացած դումարից:

71. Կուրակային տնտեսությունների ստացած յեկամուտները հաշվվում են գյուղատնտեսությունն ամեն մի ճյուղի վերաբերյալ առանձին և հարկվում են իրական յեկամուտների համեմատ: Դրա հետ միասին հարկվում են գյուղատնտեսությունն բոլոր յեկամուտի աղբյուրներից ստացած յեկամուտները, նույն թվում և այնպիսիները, վորոնք տվյալ շրջանի միջակ տնտեսություններում չեն հարկվում (որինակ՝ խոզաբուծություն, թռչնաբուծություն յեկամուտները և այլն):

72. Կուրակային տնտեսությունների հարկվող յեկամուտը, վորը ստացվում է գյուղատնտեսական յուրաքանչյուր յեկամուտի աղբյուրից, վորոշվում է վոչ թե յեկամուտն ու ծախքը մանրամասն հաշվելու միջոցով, այլ արևտնություն մեջ յեղած հարկման որ-յեկանների և նրանց միջին յեկամուտը բարձրացնող յուրաքանչյուր ցուցանիշների համադրատեսակով:

73. Վոչ-գյուղատնտեսական գրադմունքներից ստացած բոլոր տեսակի յեկամուտները, նույն թվում նաև աշխատավարձը, հաշվի յեն առնվում և մտցվում են հարկվող յեկամուտի մեջ 100 տոկոսով, յեթե յեկամուտները ըստացող տնտեսությունն անդամները չեն կտրել իրենց կայր տնտեսության հետ և այնտեղ ունեն հողաբաժին:

74. Անհատական կարգով հարկվող տնտեսությունների ցուցակները կազմում և նրանց յեկամուտի չափը նախապես վորոշում են գյուղական խորհուրդները: Գյուղական խորհուրդների կազմած ցուցակները և հաշված յեկամուտը քննություն են առնվում չքաղաքայինների, կոլտնտեսականների նաև միջակների ակտիվի ժողովում: Անհատական կարգով հարկվող տնտեսությունների ցուցակները վերջնական

նապես հաստատում և նրանց յեկամուտը վորոշում են շրջանային հարկային հանձնաժողովները:

Այս կամ այն տնտեսությունն անհատական կարգով հարկելու և յեկամուտը ճիշտ վորոշելու մասին կասկածներ ծագելիս, շրջանային հարկային հանձնաժողովները կատարում են տնտեսության հետադրում:

75. Անհատական կարգով հարկվող կուրակային տնտեսություններից հարկը գանձվում է հետևյալ չափով՝

Տնտեսության յեկամուտի առաջին 500 ուրբուլ յուրաքանչյուր ուրբուլց գանձվում է 20 կոպ:

500 ո. ալեւի, մինչեւ 700 ո. յեկամուտի ալեւցուկի յուրաքանչյուր ուրբուլց գանձվում է 30 կ:

700 ո. ալեւի, մինչեւ 1000 ո. յեկամուտի ալեւցուկի յուրաքանչյուր ուրբուլց գանձվում է 40 կ:

1000 ո. ալեւի, մինչեւ 3000 ո. յեկամուտի ալեւցուկի յուրաքանչյուր ուրբուլց գանձվում է 50 կ:

3000 ո. ալեւի, մինչեւ 6000 ո. յեկամուտի ալեւցուկի յուրաքանչյուր ուրբուլց գանձվում է 60 կ:

6000 ո. բարձր յեկամուտի ալեւցուկի յուրաքանչյուր ուրբուլց գանձվում է 70 կ:

76. Անհատական կարգով գյուղհարկի յենթարկված տնտեսություններին վոչ մի արատնություն չի արվում:

77. Կուրակային տնտեսություններում գյուղատնտեսական հարկի հետ միաժամանակ արհեստահարկ է գանձվում նաև այն վոչ-գյուղատնտեսական գրադմունքներից, վորոնք այդ որոնքի համաձայն յենթակա յեն արհեստահարկի, թե՛ շրջանառությունից տոկոսային հարաբերությամբ և թե՛ կայուն դուրսքներով:

78. Անհատական կարգով հարկվող կուրակային տնտեսությունների միասնական գյուղատնտեսական հարկը լըրիվ չափով վճարելու համար սահմանվում է մեկ ժամկետ՝ 68-րդ հոգվածի «ա» կետով նախատեսված շրջանների համար մինչեւ 1931 թ. սեպտեմբերի 20-ը, իսկ «բ» կետով նախատեսված շրջանների համար՝ մինչեւ 1931 թ. հոկտեմբերի 1-ը:

79. Առաջարկվում է Բան. Գյուղ.

Տեսություն ժողովատիս, Ծինժողովատիս և Դատարարություն իրենց տեղական մարմինների միջոցով խիստ կերպով հսկել, վորպեսզի վոչ մի միջակ տնտեսություն անհատական կարգով չհարկվի, իսկ այս պահանջը խիստելու դեպքում մեղավորներին յենթարկել վարչական և դատական պատասխանատվության:

ՀԱՏՎ ԱԾ 6

ՀԱՐԿԸ ԳԱՆՉՈՂ ԽԱՐՄԻՆՆԵՐԸ, ԳԻՄՈՒՄՆԵՐ ՈՒ ԳԱՆԳԱՏՆԵՐ ՏԱԼՈՒ ՅԵՎ ՔՆՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

81. Գյուղական վայրերում միասնական գյուղատնտեսական հարկի կամ պանիան կիրառելու պարտականությունը և պատասխանատվությունը դրվում է գյուղխորհուրդների և շրջանային գործկոմի վրա:

82. Գյուղական խորհուրդների վրա դրվում են հետևյալ պարտականությունները՝

ա) հաշվի առնել յեկամուտի աղբյուրները և շնչելը:

բ) կազմել նախնական ցուցակներ՝

1) լրիվ կամ մասնակի չափով գյուղ հարկից ազատվող սակավազոր տնտեսությունների:

2) այն տնտեսությունները, վորոնց մասնավոր շուկայում գյուղատնտեսական միջուկները վաճառելուց ստացած յեկամուտները յենթակա յեն գյուղհարկի:

3) անհատական կարգով գյուղհարկի յենթակա կուրակային տնտեսությունների:

դ) շրջագործկոմների հատուկ հանձնարարությամբ հաշվարկել գյուղհարկի դումարը, հաշվել հարկի յենթակա հարկվող յեկամուտը, լրացնել հարկաթերթերը, վարել առանձին հարկատուների անձնական հաշիվները և ամբողջ գյուղհարկի հաշվետվությունն ու հաշվապահությունը:

դ) հարկաթերթերը հանձնել հարկատուներին:

ե) ընդունել գյուղհարկի վճարները և սահմանված կարգով ուղարկել հարկերն ընդունող հիմարկություններին:

զ) տարերային ազեաների դեպքերում կազմել արձանագրություններ:

80. Այն ապակուրակացված տնտեսությունները, վորոնք թագրած յեկամուտներ, դրամադուրի և դուրք չունեն, յենթարկվում են գյուղհարկի անհատական աշխատավորական արևտնությունների համար սահմանված ընդհանուր հիմունքներով, բայց առանց վորեւ արտնություն ստանալու իրավունքի:

ը) վերադարձնել և հաշվադեղել գյուղհարկի դերավճարներն այն դեպքերում, յերբ գյուղխորհուրդներին հանձնարարված է հարկեր ընդունել և հարկատուների անձնական հաշիվները վարել:

թ) 93-րդ հոգվածի համաձայն տուգանել յեկամուտի աղբյուրներ թագրող հարկատուներին:

ժ) անպարտաձանաչ հարկատուների վերաբերմամբ դործադրել հարկեր գանձելու հարկադիր միջոցներ:

83. Միասնական գյուղատնտեսական հարկի կամ պանիան կիրառելու համար ամենուրեք գյուղխորհուրդներին կից, վորպես ոժանդակ մարմիններ, կազմակերպվում են գյուղհարկային հանձնաժողովներ:

Գյուղհարկային հանձնաժողովի անդամներ են հանդիսանում՝ գյուղխորհուրդի նախագահը, գյուղի յենթակա նախագահը, գյուղի համայնքի կողմից ընտրված ներկայացուցիչը, կոլտնտեսության վարչության ներկայացուցիչը և չքաղաքական խմբակի ներկայացուցիչը:

Գյուղհարկային հանձնաժողովի նախագահ է հանդիսանում գյուղխորհուրդի նախագահը:

84. Գյուղհաշվառու հանձնաժողովների վրա դրվում են հետևյալ պարտականությունները՝

ա) ստուգել և հաստատել գյուղհարկից ազատված սակավազոր տնտեսությունների ցուցակը:

բ) նախապես վորոշել յուրաքանչյուր տնտեսության վոչ-գյուղատնտեսական գրադմունքներից ստացած յեկամուտների դումարները:

դ) նախապես վորոշել այն տնտեսութեանները, յետևանքները, վորոնց գյուղատնտեսական միջերկրները մասնավոր շուկայում վաճառելուց ստացած յեկամուտները յենթակա յեն գյուղհարկի:

դ) նախապես քննել կուլակային տնտեսութեանները ցուցակը և վորոշել նրանց յեկամուտները:

ե) նախապես քննել հարկատուների գանդատները, նաև արտոնութեանները ու զեղչերի վերաբերյալ նրանց զեմուտները:

85. Շրջանային գործադիր կոմիտեաների վրա զբաղում են հետևյալ պարտականութեանները:

- ա) զեկամուտը հաշվառումը:
- բ) ստուգել գյուղխորհուրդների կողմից կարգված գյուղացուցակների և կատարված հաշվառման ճշտութեանը:
- գ) հաստատել գյուղհարկից ազատված տնտեսութեանների ցուցակը:

դ) շրջանի սահմաններում հսկել և զեկամուտը գյուղհարկի գանձման աշխատանքները:

ե) հրահանգել կորստետեսութեանները վարչութեաններին, հսկել նրանց կողմից հարկը հաշվելու վրա և ստուգել նախապես և վերջնականապես հաշված հարկի ճշտութեանը:

զ) ազատել տարերային աղետներից վնասված տնտեսութեանները՝ հարկը լրիվ կամ մասամբ վճարելուց:

ը) կիրառել որևէքով նախատեսված բոլոր զեղչերն ու արտոնութեանները: թ) գյուղհարկը գանձելու համար գործադիր հարկերի գանձման կանոնադրույթում սահմանված հարկազրկման միջոցներ:

ժ) կորստետեսութեանների հարկը հաշվելու համար անհրաժեշտ տեղեկութեանները ժամանակին չներկայացնելու կամ սխալ տեղեկութեաններ ներկայացնելու համար սուղամեղ կորստետեսութեաններին:

ի) կատարել հարկման յենթակա յեկամուտներն հաշվելու, հարկը հաշվելու, հարկաթերթերն կազմելու վերաբերյալ բոլոր աշխատանքները, բացառությամբ այն գյուղերի, վորտեղ այդ աշխատանքները զբաղված են գյուղխորհուրդների վրա:

լ) վերադարձնել և հաշվակցել գյուղ հարկի զեղծարները:

խ) վարել առանձին հարկատուների անձնական հաշիվները: ինչպես նաև ամբողջ գյուղհարկի հաշվետվութեանն ու հաշվադրությունը:

86. Շրջագործկոմիտեաների կողմից կազմակերպվում են գյուղհարկային հանձնաժողովներ հետևյալ կազմով:

ա) նախագահ— շրջագործկոմի նախագահը:

բ) անդամներ— շրջագործկոմի Ֆինրամի վարիչը, շրջագործկոմի հողբաժնի վարիչը, համապատասխան արհեստակցական կազմակերպության ներկայացուցիչը, շրջանային կուլանտմիութեան վարչության անդամը, այն գյուղի խորհուրդի նախագահը, վորի գործերը քննվում են, և շրջակային ներկայացուցիչը:

87. Շրջանային գյուղհարկային հանձնաժողովների վրա զբաղում են հետևյալ պարտականութեանները:

ա) նախապես քննել ու յեղրակացութեան ներկայացնել ժողովխորհրդի կամ Ֆինթոլկոմատին շրջանային և գյուղական յեկամտարերութեան նորմաներ սահմանելու մասին:

բ) լուծել սակավազոր կորստետեսութեանները հարկից ազատելու խնդրերը:

գ) քննել և հաստատել գյուղատնտեսական միջերկրները մասնավոր շուկայում վաճառող տնտեսութեանների զուցակը և յեկամտի գումարը:

դ) քննել և լուծել հարկատուների գանդատները:

ե) հաստատել անհատական կարգով հարկվող տնտեսութեանների ցուցակը և վորոշել նրանց յեկամուտը:

զ) պարզել հարկատուների վոչ-գյուղատնտեսական զբաղմունքներից բուտացված յեկամուտների վերջնական գումարները և վերջնականապես վորոշել նույն անտեսութեանների ընդհանուր հարկվող յեկամտի գումարները:

88. ՀԱՍՀ Ժողովխորհրդին կից կազմակերպվում է միասնական գյուղատնտեսական հարկի հանրապետական Հանձնաժողով հետևյալ կազմով— Ֆինթոլկոմ, հողթոլկոմ, Պետպլանի նախագահ, ՀԱՍՀ-ի նախագահ, Կուլկորստակերտորանի նախագահ և կենտրոնի նախագահ:

Հանձնաժողովի նախագահ— Ֆինթոլկոմ, տեղակալ— հողթոլկոմ:

Հանրապետական Հանձնաժողովի վրա զբաղում են այս վորոշումից բխող բոլոր գործնական աշխատանքների զեկամուտը և պատասխանատվությունը:

89. Բոլոր հիմնարկութեանները, կազմակերպութեաններն ու ձեռնարկութեանները (պետական, կոոպերատիվ և մասնավոր) պարտավոր են հարկային մարմիններին, շրջագործկոմի ներքին և գյուղխորհուրդներին պահանջով ներկայացնել նրանց հարկատուներին վճարած գումարների մասին տեղեկութեաններ: Այդ տեղեկութեաններում մասնանշվում են հարկատուների ազգանունը, անունն ու հայրանունը և բնակութեան վայրը (գյուղ, շրջան) նմանապես մասնանշվում են, թե ինչի համար են վճարված այդ գումարները:

90. Կորստետեսականները և անհատական տնտեսութեանները գյուղհարկի վերաբերյալ բոլոր զեմուտներն ու գանդատները տալիս են գյուղխորհուրդներին, վորոնք պարտավոր են անհապաղ հանձնելու այդ գյուղհարկային հանձնաժողովին ի քննութեան: Կյուղական հարկային հանձնաժողով-

ների վորոշումների զեմ կարելի յեմ միջոցներն գանդատ տալ շրջանային հարկային հանձնաժողովներին, վորոնց վորոշումները վերջնական են:

Հարկային հանձնաժողովները պարտավոր են ստացված զեմուտներն ու գանդատները քննել ստացված որից մեկ ամսվա ընթացքում:

91. Դիմումներ և գանդատներ տալու համար սահմանվում են հետևյալ ժամանակամիջոցները:

ա) յեկամտի աղբյուրների և շնչերի թիվ սխալ հաշվառման զեմ տրվող գանդատները, այլև արտոնութեաններ ստանալու վերաբերյալ զեմուտները, բացի տարերային աղետների մասին հարուցվող միջնորդութեաններից, տրվում են հարկաթերթեր վճարողին հանձնելուց հետո մեկ ամսից վոչ ու:

բ) տարերային աղետների հետևանքով արտոնութեաններ ստանալու վերաբերյալ զեմուտները տրվում են հաշվառման ժամանակ, յեթև աղետը տեղի յե ունեցել միջև հաշվառումը և աղետից հետո 15 օրվա ընթացքում, յեթև աղետը տեղի յե ունեցել հաշվառումից հետո:

92. Դիմումների և գանդատների տալը չի դադարեցնում հարկի գանձումը:

ՀԱՏՎԱԾ 7

ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

93. Հարկատուներն իրենց յեկամտի աղբյուրները հարկն գանձող մարմիններից թաղցնելու համար տուգանվում են վարչական կարգով, կամ յենթարկվում են դատական պատասխանատվության:

Տուգանքը նշանակում են գյուղխորհուրդները: Թաղցնելու համար վորոշած տուգանքի գումարը չի կարող 5 անգամից ավելի լինել հարկի այն չափից, վորը կարկատեր յեկամտի աղբյուրը թաղցնելու հետևանքով:

Տուգանելու վերաբերյալ գյուղխորհուրդների վորոշումների զեմ կարելի յե գանդատ տալ շրջանային գործադիր կոմիտեաններին, վորոնց վորոշումները վերջնական են:

94. Կորստետեսութեանների հարկը հաշվելու (20-րդ հոդ.) համար ժամանակին անհրաժեշտ տեղեկութեան-

ներ չներկայացնելու, ինչպես նաև սխալ տեղեկութեաններ ներկայացնելու զեպում, մեղավոր անձանց վրա զբաղում է 25 օ. տուգանք:

95. Սահմանված ժամկետներին հարկ չվճարող հարկատուների վերաբերմամբ կիրառվում են հարկերի գանձման մասին կանոնադրությամբ նախատեսված միջոցներ:

Մասնավորապես հարկ չվճարողների դույքը ցուցակազրկվում է և վաճառվում, իսկ հարկն ուշացնելու պատճառով յուրաքանչյուր ուշացած օրվա համար տույժ է գանձվում:

Կորստետեսութեաններից— 0,1 տոկոս:

Անհատական աշխատավորական տնտեսութեաններից— 0,2 տոկոս:

Կուլակային տնտեսութեաններից— 1 տոկոս:

ՀԱՏՎ ԱԾ 8

ԳՄՆՉՎԱԾ ՀԱՐԿԻ ԲԱՇԽՈՒՄԸ

96. Գյուղհարկի բոլոր մուծումները հատկացվում են տեղական միջոցների ոգտին և բաշխվում են գյուղական ու շրջանային բյուջեների միջև:

97. Անմիջաբար գյուղական բյուջեին հատկացվում է գանձված հարկի այն մասը, վերը կառավարի ԱՍՖՆՀ որենադրությամբ, սակայն ավելի գյուղում գանձված հարկի 50 տոկոսից վոչ պակաս:

98. Գյուղհարկի գանձված ամբողջ

գումարը, բացի գյուղական բյուջեին հատկացված մասից, մտցվում է շրջանային բյուջեյի յեկամտային մասը:

Շրջանային բյուջեյով անցկացվող գյուղհարկի գանձված գումարի մի մասը հատկացվում է շրջանային կարգավորման ֆոնդին, սակավադր գյուղական բյուջեներն ուժեղացնելու համար: Այդ մասի չափը ամեն մի շրջանի համար սահմանում է ՀԱՍՀ Ժողկոմխորհը:

ՀԱՏՎ ԱԾ 9

ԱՅՍ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ

99. Այս կանոնադրության կիրառման վերաբերյալ բոլոր հրահանգների և կանոնների հրապարակման պատասխանատվությունը ղրվում է ՀԱՍՀ Ֆինանսկոմատի վրա:

Ժողովրդական կոմիտեաների Խորհրդի նախագահ՝
Ս. ՏԵՐ-ԳՍԲՐԻԵԼՅԱՆ


Ժողովրդական կոմիտեաների Յերեվան Խորհրդի գործերի կառավարիչ՝
Ի. ԿԱՐԱԳԵՏՅԱՆ

ՊԵՏՆՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ



1931 թ. ԳՅՈՒՂԱՐԿԻ ՈՐՅԵԿՏՆԵՐԻ ՅԵՎԱՄՏԱՐԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՆԵՐՆ ԸՍՏ ՀՍԻՋ ՅԵՎ ՆՐԱ Ծ Ր Զ Ա Ն Ն Ե Ր Ի

Ա. Ն. Ը. Ը. Կ. Կ. Կ. Կ.	ՈՐՅԵԿՏՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	ՀՈ Ղ Ա Գ Ո Ր Ծ Ո Ի Թ Յ Ո Ի Ն										ԿԵՆԴԱՆԱՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ					ՄԵՆԱԿՐՈՒԾ			
		ՄԵԿ ՀԵԿՏԱՐ տարածութեան յեկամտաբերութեանը ուղղութիւններով										ՄԵԿ գլուխ անասունի յեկամտաբերութ. ուղղութիւններով					ՄԵԿ փեթակ յեկամտաբ. օ.			
		ՅՈՒՐ	Բամբակ	Չափակ	Ծխախոտ	Կարտոֆիլ	Բանջարանոց բուստան	Սաղորդ սոյակն.	Պարտառ սոյակ.	Սնունդայգ	Ցանովի խոտ և կերի արմատայգ	Թփանոց	Կովերու մասանի. ցուխը ցիւր և ջրղլներ	Յնգներ և գոմեջներ	Ուղտիկ	Եշեր	Կրկնաբանիկ և ձիեր	Նախապէս	ՓԵԹԱԿՆԵՐ	
1.	Արարան	41-70	-	-	-	52	145	-	-	15	42	-	16	17	15	17	6	3	8	5
2.	Ալլանդիերդի	45-70	-	-	260	52	205	164	275	18	46	100	17	17	15	17	6	3	8	8
3.	Ախտա	45-70	-	-	-	52	126	-	275	15	46	-	16	17	15	17	6	3	8	5
4.	Աղբարա	38-70	-	-	-	52	142	-	-	17	39	-	19	17	15	17	6	3	8	5
5.	Աշտարակ	59-60	52	-	260	52	174	380	275	15	60	-	12	17	15	17	6	3	8	5
6.	Բատարդեշար	53-70	-	-	260	52	126	-	-	16	54	-	16	17	15	17	6	3	8	5
7.	Դարալոգյազ	48-70	52	230	260	52	174	290	275	12	49	100	13	17	16	17	6	3	8	5
8.	Դուրբյանդ	53-70	-	-	-	52	142	-	-	15	54	-	16	17	15	17	6	3	8	5
9.	Գորիս	46-70	-	-	-	52	103	185	275	13	47	100	14	17	15	17	6	3	8	5
10.	Դիլիջան	40-70	-	-	260	52	200	-	275	17	41	-	19	17	15	17	6	3	8	5
11.	Թալին	48-70	-	230	260	52	142	-	275	12	49	-	15	17	15	17	6	3	8	5
12.	Իջևան	49-60	-	-	260	52	200	165	275	16	50	100	17	17	15	17	6	3	8	5
13.	Կասալբ	57-60	-	-	260	52	172	200	275	15	58	100	14	17	15	17	6	3	8	5
14.	Ղամարլու	111-20	52	230	260	52	307	427	275	16	112	-	12	17	15	17	6	3	8	5
15.	Ղարաբիլիսա	43-70	-	-	-	52	205	-	275	19	44	-	18	17	15	17	6	3	8	5
16.	Ղափան	43-70	-	230	260	52	102	-	275	10	44	100	11	17	15	17	6	3	8	5
17.	Ղուրդուղուլի	114-20	52	230	260	52	291	370	275	16	115	100	12	17	15	17	6	3	8	5
18.	Մարտունի	45-70	-	-	260	52	126	-	275	16	46	-	16	17	15	17	6	3	8	5
19.	Մոլլա-Գյոյաշա	49-60	-	-	-	52	142	-	-	16	50	-	16	17	15	17	6	3	8	5
20.	Մեղրի	57-60	52	230	260	52	190	419	275	12	58	100	13	17	15	17	6	3	8	5
21.	Նոր-Բայազետ	42-70	-	-	260	52	126	-	-	16	43	-	16	17	15	17	6	3	8	5
22.	Սիսիան	45-70	-	-	260	52	103	-	275	15	46	100	15	17	15	17	6	3	8	5
23.	Շամշաղին	45-70	-	-	260	52	205	165	275	14	46	100	16	17	15	16	6	3	8	5
24.	Ստեփանազան	51-60	-	-	-	52	205	-	275	23	52	-	22	17	15	17	6	3	8	5
25.	Վաղարշապատ	101-30	52	230	260	52	290	385	275	16	101	100	11	17	15	17	6	3	8	5
26.	Վեդի	79-50	52	230	260	52	142	390	275	15	80	-	12	17	15	17	6	3	8	5
		52	52	230	260	52	230	370	275	18	52	100	16	17	15	17	6	3	8	5



995-1

11

25284

5-